

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Փետրվարի 23-ին, շաբաթի, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցով մեկնեց Մոսկվա։ Նորին Ս. Օծության ընկերակցում էր Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պոզապալյանը։

Երևանի քաղաքային կայարանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանները և պաշտոնեությունը։

Փետրվարի 25-ին, ուրբաթ, Վեհափառ Հայրապետը հասավ Մոսկվա, ուր քաղաքային կայարանում Հայոց Հայրապետին դիմավորելու և բարի գալուստ մաղթելու էին եկել Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը, Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի անունից միտրոպոլիտ Յոհանը։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Լենինգրադսկայա» հյուրանոցը։

Փետրվարի 27-ին, կիրակի, Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի անվանակոչության տոնն էր։ Վեհափառ Հայրապետը հրավիրվել էր մասնակցելու հանդիսությանց։ Առավոտյան ժամը 10-ին, աղգիս Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Պարգև սրբազանի և հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետի, առաջնորդվեց Մոսկվայի ռուսաց պատրիարքանիստ տաճարը։ Իր տոնի առթիվ, սուրբ պատարագը մատուցում էր Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքը, շրջապատված միտրոպոլիտներով և բարձրաստիճան հոգևորականներով։ Հանդիսության ներկա էին նաև Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասի ներկայացուցիչ գերաշնորհ Մելիտոն միտրոպոլիտը և այլ անձինք։

Հետմիջօրի ժամը 3-ին, Մոսկվայի Պատրիարքարանի դահլիճում, Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի կողմից, ի պատիվ հյուրերի, կազմակերպվել էր ընդունելություն։ Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով, մասնակցեց պաշտոնական ճաշկերույթին։ Ներկա էին Ռուս Եկեղեցու բազմաթիվ միտրոպոլիտներ, գլխավորությամբ գերաշնորհ Պիմեն, Յոհան և Նիկոդիմ միտրոպոլիտների, Տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչ միտրոպոլիտ Մելիտոն և այլ եպիսկոպոսներ, շուրջ 60 հոգի։

Ընդունելության ընթացքում Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի կենաց առաջին բաժակը առաջարկեց խմել Վեհափառ Հայրապետը, հետևյալ ֆրանսերեն ճառով.

«Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր Մեր.

Մեզ համար միշտ բացառիկ հաճույք է գտնվել Մոսկվայում և հանդիպում ունենալ Ձեզ հետ։

Այս անգամ սակայն Մեր ուրախությունն առավել մեծ է, որովհետև այսօր տոնվում է Ձեր անվանակոչության օրը, այնքան հանդիսավոր իրադրության մեջ։

Գոհություն Աստուծո, որ այսօր Ձեզ տեսնում ենք քաջառողջ և այսքան լի եռանդով ու պայծառ հոգիով։

Մենք Ձեզ սիրում ենք ամենայն անկեղծությամբ և հարգանքով։ Եվ ոչ միայն ան-

ՊԱ - 6570.





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ, ՄՈՍԿՎԱՅԻ ՌՈՒՍԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ, ԾՐԶԱՊԱՏՎԱԾ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ։

ճամբ Մենք, այլ Մեր ամբողջ ժողովուրդն ու մեր Եկեղեցին:

Մեզ բոլորիս համար Դուք իմաստուն Հովվապետն եք Ռուս Պրավոսլավ մեծ Եկեղեցու, հարազատ ներկայացուցիչը ռուս եղբայր ժողովրդի և մեծագույն պաշտպաններից մեկը աշխարհի խաղաղության:

Մենք, իրոք, շատ ուրախ ենք այս պահուս, որ առիթն ունենք Ձեզ ներկայացնելու Մեր խնդակցությունը, մաղթելով Ձեզ կենաց ևս բազում տարիներ, որպեսզի շարունակեք Ձեր սրբազան առաքելությունը:

Այսօր Մենք պարտք ենք զգում ներկայացնելու Ձերդ Սրբության նաև Մեր խորին գոհունակությունը այն հուզիչ նամակի համար, որ Դուք ուղարկեցիք Մեզ անցյալ տարի, աղոթելով հայ ժողովրդի մոտ երկու միլիոն զոհերի հոգիների համար, որոնք նահատակվեցին առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, Օսմանյան Թուրքիայի կառավարության հրամանով: Այդ ողբերգությունը մեր դարի առաջին ցեղասպանությունը հանդիսացավ, որն ուրիշ բարբարոսներ կրկնեցին երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքին, ավելի մեծ չափերով: Այդ նամակի համար, Ձեր աղոթքների համար, հաճեցեք ընդունել, Ձերդ Սրբություն, մեր Եկեղեցու և Մեր երախտագիտությունը:

Կեցցե՛ Ալեքսի Սրբազան Պատրիարքը, Մեր սիրեցյալ Եղբայրն ի Քրիստոս»:

Ելույթներ ունեցան Պիմեն, Յոհան, Նիկոդիմ և Մելիտոն միտրոպոլիտները, որոնք վեր հանեցին Ալեքսի Պատրիարքի եկեղեցաշեն, խաղաղանվեր գործունեությունը, իմաստուն առաջնորդությունը և մաղթեցին Նրան երկար, քաջառողջ կյանք։

Հուսկ ուրեմն Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքը շնորհակալություն հայտնեց ջերմ խոսքերի համար և բաժակ առաջարկեց Հայոց Հայրապետի և բոլոր ներկաների կենաց, մաղթելով եկեղեցիների միջև քրիստոնեական սեր, միություն և աշխարհիս խաղաղություն։

Մարտի 1-ին, երեքշաբթի, *առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական գործերի խորհրդի նախագահ Կուրայեւովին և նրա պաշտոնակիցներին։*

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական գործերի խորհրդի նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, սիրալիր մթնոլորտում։

Մարտի 4-ին, ուրբաթ, *հետմիջօրեի ժամը 3-ին, Վնուկովոյի օդանավակայան էին եկել, Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար, Ռուսաց Պատրիարքի անունից՝ գերաշնորհ Տ. Նիկոլա արքեպիսկոպոսը, դերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոսը։*

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորում են Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը։

Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի առաջ Իր աղոթքն անելուց հետո, առաջնորդվում է Վեհարան, ուր օրհնում է միաբանության անդամներին և բոլոր ներկաներին։